ԲՈՒԺԱՌՈՒՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ՝ ՆԵՐԱԿՆԱՅԻՆ ՈՍՊՆՅԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հարգելի բուժառու,

Ձեզ վերջերս տեղադրվել է HumanOptics-ի արտադրության արհեստական ոսպնյակի իմպլանտ (կոչվում է նաև ներակնային ոսպնյակ կամ ՆԱՈ [IOL]): Բուժառուների այս տեղեկատվական թերթիկը նախատեսված է տրամադրելու ներակնային ոսպնյակների վերաբերյալ ամենահաճախ տրվող հարցերի պատասխանները: Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք խորհրդակցել Ձեր ակնաբույժի հետ:

ԻՆՉԻ՞ ՀԱՄԱՐ Է ՕԳՏԱԳՈՐԾՎՈՒՄ ՆԵՐԱԿՆԱՅԻՆ ՈՍՊՆՅԱԿԸ:

Վիրահատության ժամանակ Ձեր աչքի բնական մշուշված ոսպնյակը հեռացվել է, և փոխարենը տեղադրվել է ներակնային ոսպնյակ: Սովորաբար սա զգալիորեն բարելավում է տեսողությունը:

Ո՞Ր ԲՈՒԺԱՌՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ Է ՀԱՐՄԱՐ ՆԵՐԱԿՆԱՅԻՆ ՈՍՊՆՅԱԿԸ:

Ներակնային ոսպնյակն օգտագործվում է մեծահասակ հիվանդների համար, որոնց բնական ոսպնյակն այլևս չկա: Ոսպնյակի բացակայությունը կարող է լինել կամ բնածին, կամ դժբախտ պատահարի պատճառով, կամ, ինչպես դեպքերի մեծ մասում՝ հեռացվել է կատարակտի վիրահատության ժամանակ: HumanOptics-ի ներակնային ոսպնյակների իմպլանտացման հետ կապված կլինիկական տվյալներ չկան երեխաների, հղի կանանց կամ կրծքով կերակրող կանանց և թուլացած իմունիտետով անձանց համար:

ԿԱ՞Ն ԱՐԴՅՈՔ ԻՄՊԼԱՆՏՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ:

Ոչ մի բժշկական միջամտություն ամբողջովին ռիսկերից զուրկ չէ, այդ թվում նաև՝ կատարակտի վիրահատությունը և դրան առնչվող ներակնային ոսպնյակի իմպլանտացումը: Այնուամենայնիվ, հենց իմպլանտի պատճառած որևէ անբարենպաստ երևույթ հայտնի չէ:

ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՔ ԻՄԱՆԱԼ, ԹԵ ՈՐ ԱՐՏԱԴՐԱՆՔՆ Է ՁԵԶ ԻՄՊԼԱՆՏԱՑՎԵԼ:

Վիրահատությունից հետո Ձեզ տրամադրվել է բուժառուի քարտ, որտեղ նշված են արտադրողի կոնտակտային տվյալները: Բացի օգտագործված իմպլանտի մասին տեղեկություններից՝ բուժառուի քարտում նշված են նաև Ձեր անունը, վիրահատության օրը, վիրահատությունն իրականացնող ակնաբույժի և ակնաբուժական կենտրոնի կոնտակտային տվյալները: Ձեր իմպլանտը նույնականացվում է իր եզակի սերիական համարով (SN):

ԻՆՉ ՆՅՈՒԹԻՑ Է ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ՆԵՐԱԿՆԱՅԻՆ ՈՍՊՆՅԱԿԸ:

HumanOptics-ի կողմից արտադրվող արհեստական ոսպնյակները պատրաստված են կենսահամատեղելի պլաստմասայից: Սա օպտիկապես թափանցիկ, կենսահամատեղելի, ճկուն, հիդրոֆիլ ակրիլային համապոլիմեր է, որը բաղկացած է պոլիակրիլատից (74%) և աղային լուծույթից (26%). բեկման ցուցիչը՝ 1,46 և Աբբեի թիվը՝ 56: Այս նյութը համատեղելի է ցանկացած լազերային բուժման (Nd:YAG լազեր) հետ, որը կարող է հետագայում անհրաժեշտ լինել:

Պոլիակրիլատը բաղկացած է հիմնական բաղադրիչներից՝ 2-հիդրոքսիէթիլ մետակրիլատից (HEMA, մոտավորապես 80%) և մեթիլմետակրիլատից (MMA, մոտավորապես 20%), ուլտրամանուշակագույն ճառագայթման կլանիչով (<1%):
«Y» տառով ավարտվող մոդելները պարունակում են նաև կապույտ լույսի ֆիլտր (<0,05%), որը պաշտպանում է տեսանելի լույսի բարձր էներգիայով կապույտ բաղադրիչներից, որոնք երկարաժամկետ հեռանկարում կարող են հանգեցնել ցանցաթաղանթի վնասման:
ՆԱՈ-ի նյութից վնասակար քանակությամբ նյութեր չեն արտանետվում:

ԻՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵՄ ՎԻՐԱՀԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ:

Բուժման լավագույն արդյունք ստանալու համար կարևոր է հետևել Ձեր ակնաբույժի ցուցումներին և հաճախել հետզննման այցելություններին, ինչպես որ համաձայնեցրել եք Ձեր ակնաբույժի հետ:
Եթե այլ կերպ ցուցված չէ Ձեր ակնաբույժի կողմից, վիրահատությունից հետո առաջին երկու շաբաթվա ընթացքում պետք է խուսափեք վիրահատված աչքի հետ որևէ մանիպուլյացիա կատարելուց, օրինակ՝ սեղմելուց կամ տրորելուց: Ձեր աչքը չպետք է շփվի ջրի կամ օճառի հետ՝ ցնցուղ ընդունելիս կամ լվացվելիս: Սկզբնական շրջանում պետք է նաև զերծ մնաք ֆիզիկական ծանրաբեռնվածությունից, լողալուց, սուզվելուց, հեծանվավազքից կամ սաունա այցելելուց: Հարկավոր է նաև խուսափել այնպիսի գործողություններից, երբ մեծ քանակությամբ փոշի և կեղտ կա:
Վիրահատությունից հետո առաջին մի քանի օրերին խորհուրդ ենք տալիս կրել արևային ակնոց, քանի որ զգայունությունը լույսի նկատմամբ կարող է մեծացած լինել:
Անհրաժեշտության դեպքում, կատարակտի վիրահատությունից հետո՝ սովորաբար չորսից վեց շաբաթ հետո Ձեզ կարող են նոր ակնոց նշանակել: Կարիք չկա ավելի վաղ անել դա, քանի որ աչքը նախ պետք է սովորի նոր ոսպնյակին: Բազմաֆոկալ ՆԱՈ-ների դեպքում ակլիմատիզացիայի ժամանակահատվածը կարող է տևել մինչև 6 ամիս: Եթե կարճ ժամանակ անց Ձեզ նշանակված է երկրորդ աչքի վիրահատություն, խորհուրդ ենք տալիս, որ Ձեզ նոր ակնոց չնշանակեն, մինչև երկու աչքն էլ չվիրահատվեն: Խնդրում ենք տեղեկացնել Ձեր օպտիկայի մասնագետին տեղադրված ներակնային ոսպնյակի և ցանկացած հավելյալ առանձնահատկությունների մասին (թորիկ = եղջրաթաղանթի աստիգմատիզմի ուղղում/բազմաֆոկալ = պրեսբիոպիայի ուղղում):

ՈՐՔԱ՞Ն ԺԱՄԱՆԱԿ ԿԱՐՈՂ Է ԻՄՊԼԱՆՏԸ ՄՆԱԼ ԻՄ ՄԱՐՄՆՈՒՄ:

Եթե բժշկական հակացուցումներ չլինեն, արհեստական ոսպնյակը սովորաբար մնում է Ձեր աչքի մեջ Ձեր կյանքի մնացած ողջ ընթացքում: HumanOptics-ի ՆԱՈ-ների ծառայության հաստատված ժամկետը քսան տարի է: Խորհուրդ ենք տալիս պարբերաբար ակնաբուժական ստուգումներ անցնել, ինչպես բնական ոսպնյակներ ունեցող բուժառուների համար:

ԱՐԴՅՈ՞Ք ԱՆՎՏԱՆԳ (ՀԱՄԱՏԵՂԵԼԻ) Է ՄՌՏ ԿԱՏԱՐԵԼ ԻՄ ՆԵՐԱԿՆԱՅԻՆ ՈՍՊՆՅԱԿՈՎ:

Ձեր իմպլանտի հետ կապված Մագնիսական ռեզոնանսային տոմոգրաֆիայի (ՄՌՏ) անվտանգության (համատեղելիության) մասին տեղեկությունները կարող եք գտնել Ձեր՝ բուժառուի քարտի վրա: Այդտեղ տրամադրված են կարևոր տեղեկություններ իմպլանտի մասին՝ ՄՌՏ հետազոտության ժամանակ մագնիսական ճառագայթման վերաբերյալ, քանի որ ներակնային ոսպնյակը իմպլանտացվելուց հետո մշտապես ֆիքսված է մնում Ձեր մարմնի մեջ:
HumanOptics-ի բոլոր ներակնային ոսպնյակներն անվտանգ են ՄՌՏ հետազոտության համար, ինչը նշանակում է, որ, երբ ՆԱՈ-ն մտնում է ՄՌՏ սկաների մագնիսական դաշտ, հավելյալ սահմանափակումներ չկան: Լրացուցիչ մանրամասների համար խնդրում ենք այցելել www.humanoptics.com/mri.:

ԻՆՉ ԿՈՂՄՆԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ/ԱԽՏԱՆԻՇՆԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՌԱՋԱՆԱԼ, ՈՐՈՆՔ ԿԱՊՎԱԾ ԵՆ ՆԱՈ-Ի ԻՄՊԼԱՆՏԱՑՄԱՆ ՀԵՏ, ԿԱՄ ԻՆՉԸ ԿԱՐՈՂ Է ՎԿԱՅԵԼ ՈՍՊՆՅԱԿԻ ԹԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ:

Ոսպնյակի իմպլանտացումից հետո կարող են առաջանալ հետևյալ կողմնակի ազդեցությունները, որոնք սովորաբար անցնում են կարճ ժամանակից.

- Օտար մարմնի զգացողություն, որն առաջացել է ոսպնյակի տեղադրման փոքր կտրվածքից
- Ճաճանչապսակներ, որոնք կարող են առաջանալ լույսի աղբյուրների շուրջ, մասնավորապես մթնշաղին կամ մթության մեջ (դրանք կարող են ավելի հաճախ առաջանալ բազմաֆոկալ ՆԱՈ-ների դեպքում)
- Վիրահատությունից հետո առաջին մի քանի շաբաթների ընթացքում կարող է լինել զգայունություն լույսի նկատմամբ

Ոսպնյակի իմպլանտացման հետ կապված բարդությունների մասին կարող են հուշել հետևյալ ախտանիշները: Այս ախտանիշներն ունենալու դեպքում խորհրդակցեք բժշկի հետ.

- Տեսողության հանկարծակի կամ աստիճանաբար վատթարացում/մշուշոտ տեսողություն
- Աչքի ուժեղ կարմրություն
- Ցավ աչքում

Այս ախտանիշները կարող են շատ հազվադեպ լինել՝ նույնիսկ բոլոր նախազգուշական միջոցները ձեռնարկելուց հետո: Եթե Ձեզ մոտ նկատվում է վերը նշված ախտանիշներից որևէ մեկը կամ ունենում եք անսպասելի խնդիր՝ ապաքինման գործընթացի հետ կապված, խնդրում ենք դիմել ձեր ակնաբույժին: Եթե լուրջ անբարենպաստ երևույթներ են առաջանում, բժիշկը պետք է դրա մասին տեղեկացնի արտադրողին և համապատասխան առողջապահության մարմնին: Ձեր երկրի համապատասխան առողջապահական մարմինը կարող եք գտնել www.humanoptics.com/patient-information կայքի «Առողջապահական մարմիններ» բաժնում:

CE
0044

V2.0/2025-01_Բուժառուի_տեղեկություններ_Acrylic_IOLs